

ИСТОРИЦИЗМ ПО КАРЛУ ПОППЕРУ. ИСТОРИЦИЗМ ПЛАТОНА

Г. Г. Каджоян

К. Поппер в I томе своего двухтомника „Открытое общество и его враги” критикует учение Платона, а во втором томе - теории Гегеля и Маркса, и обвиняет их в историцизме. Тех теоретиков, которые верят, что изобрели законы истории и на основании этих законов и закономерностей возможно предсказывать процессы исторических событий, называет историцистами. Поппер их метод считает не научным, непродуктивным, а теорию – нищей. Укоренителем историцизма Поппер считает Платона и думает, что Платон искренне верит в свою миссию, что возможно создать идеальное государство, в котором люди будут счастливы, и строит модель этого государства. А между тем, этим методом, по которому строится это общество по Попперу, является метод насилия, и такое государство вместо рая превратится в ад.

HISTORICISM ACCORDING TO KARL POPPER. PLATON' S HISTORICISM

H. G. Ghajoyan

K. Popper criticized the teaching of Plato in the first volume of his two-volume work “The open society and its enemies”, and also the theories of Hegel and Marx in the second volume; he blamed all of them for historicism.

The theoreticians, that believe they have discovered the laws of history and the historical events can be predicted by that law, are called historicists. Popper thought their method was not scientific, unusual and inefficient and that the theories were meaningless. Popper considered Plato to be the author of historicism and the truly believer of his mission that it was possible to create perfect state, the citizens of which should be happy and creates the model of that state. While the methods, that the society was made by, according to Popper, were the methods of violence, and such kind of state would be turned into hell instead of paradise.

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՌՅԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ. Գ. ՂԱՋՈՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Օ. Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

ԳԴՀ լաբորանտ

Համաշխարհայնացման գործընթացը բարդ ու հակասական ընթացքով, դրական ու բացասական, կանխատեսելի ու անկանխատեսելի հետևանքով, տեսական մտքի առջև առաջադրում է նոր խնդիրներ, որոնց պատասխանները անմիջականորեն առնչվում են ինչպես մարդկության զարգացման հեռանկարի, այնպես էլ ազգերի, ազգային մշակույթների պահպանման և զարգացման հիմնախն-

դիրներին: Ներկայումս խիստ կարևորվում է ազգային մշակութային արժեքների, գրողների ու բանաստեղծների հոգևոր ժառանգությունն նորովի մոտեցման և ուսումնասիրության հարցը: Դա վերաբերում է հատկապես այն մտածողներին, որոնք դարակազմիկ երևույթ էին ազգային մշակույթի պատմության մեջ: Հայոց համար այդպիսին է հայ մեծանուն բանաստեղծ Յովհաննես Թումանյանը: Կարծում ենք՝ ներկայումս էլ արդիական է Թումանյանի արտահայտած մտահոգությունը. «Ես գիտեմ, մի օր, իհարկե, ոչ շուտ, իմ կյանքը մեծ հետաքրքրություն ու աղմուկ է հանելու, շատ բան է պարզելու, տեսնելու են բոլորովին ուրիշ բան: Շատերը ինձ երջանիկ են կարծում, կյանքը հար ու հավասար, բայց ներքին փոթորկումներին ու աղմուկներին շատ են անծանոթ, ոչ ոք ոչինչ չգիտե: Գրվածքներս դեռ լավ չեն կարդացել, տեսել... և ոչ ոք ուղիղը չի գտնելու, չի ասելու երբեք...»¹:

Տասնյակ տարիներ գրականագետների մի քանի սերունդ համառորեն այդ ուղիղ գտնելու նպատակ են հետապնդել, և դարձյալ Թումանյանի տեսական ժառանգությունը ուսումնասիրելու խնդիրը կա: Կիսում ենք Լ. Հախվերդյանի կարծիքը, որն իրավացիորեն նշել է. «... ինչ որ բանի հասել ենք անպայման, սակայն ոչ ոք Թումանյանի մասին վերջին խոսքն ասելու հավակնություն չունի և չի կարող ունենալ»²: Հիմնական պատճառն այն է, որ փոխվում են ժամանակները, ժամանակի հետ փոխվում են ընթերցողներն ու վերլուծողները, այդ ընթացքում փոխվում են մարդկանց հոգեբանությունը, աշխարհայացքը, ուստի նրանց վերաբերմունքն էլ է փոխվում, տվյալ պարագայում՝ Թումանյանի ստեղծագործությունների հանդեպ: Մեծերին է բնորոշ մնալ ժամանակների հոլովություն և չխամրել, դեռ ավելին, իրենց մեծությամբ կապել ժամանակները՝ վերջիններիս ողջ տարբերությամբ հանդերձ: Ավածը հաստատենք Թումանյանին վկայակոչելով. « Մեծ տարբերություններից ավելի մեծ իմաստուն չկա, քան ժամանակը և ավելի խոր հաճույք չկա, քան զրույց անելը ժամանակի հետ: Եվ ժամանակի ինչքան ավելի մեծ տարբերություն առնենք, էնքան ավելի լավ»³: Մենք էլ փորձենք շուրջ իննսուն տարվա հեռավորությունից քննելու Թումանյանի քառյակները իմացաբանական որոշ տեսանկյունից և հավելենք այն, որ Թումանյանը էականորեն տարբերվում է մեր մյուս բանաստեղծներից ու գրողներից: Նրան չեն հիշում միայն դեպքից դեպք, մեծարում հոբելյանական առիթներով ու մոռացության մատնում մինչև հաջորդ հոբելյանը: Նա մեզ հետ է ամեն օր, ամեն քայլափոխի, նրա թողած դասերը հարուցում են ժամանակակիցներիս զարմանքն ու հիացմունքը, դարմանում այսօրվա հոգսն ու ցավը: Այս առումով ուշագրավ են նրա քառյակները, որովհետև «Քառյակները հրատարակելիս մի զգացում կար մեջս, մի ցանկություն՝ քննադատ լինել, որովհետև լավ քննադատի համար հոգեբանական և գեղարվեստական խորասուզումներ, վերլուծություններ անելու շատ բան քառյակներն են տալիս՝ քան որևէ մեծ գործ: Քառյակները շատ

¹ **Նվարդ Թումանյան**, Հուշեր և զրույցներ, Երևան, 2009, էջ 29:

² **Լևոն Հախվերդյան**, Թումանյանը և իր ժամանակը, Երևան, 2000, էջ 56:

³ **Հովհ. Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով (այսուհետ՝ ԵԼԺ), Երևան, 1995, հ. 7, էջ 493:

վտանգավոր բաներ են բանաստեղծի համար, բայց մանավանդ՝ քննադատի»⁴: Մեծ բանաստեղծի այս դիտողությունը խոհեմության դասեր տալու լավագույն օրինակ է: Նրան առավել մտահոգել է քառյակների ճիշտ ընկալումը: Քառյակները նախ խոհախմաստասիրական բնույթի ստեղծագործություններ են, խտացումներ, բյուրեղացումներ և հնարավորություն են տալիս բանաստեղծի հոգեկան աշխարհի, ստեղծագործական տրամադրության ու տրամադրվածության մասին պատկերացումներ կազմել:

Թումանյանը կռահել էր, որ քառյակների մեկնաբանման համար համալիր մոտեցում է պետք: Սա չափազանց ուշագրավ է: Նման մեկնաբանման առանձնահատկությունը պայմանավորված է քառյակները ընթերցելու և ընկալելու յուրահատկություններով. «Քառյակը պոեզիայի միմատյունն է, նուրբ ճաշակի բան: Քառյակները պիտի կարդալ հանգիստ ու ծանր և ամեն մարդ չի կարող հասկանալ, գնահատել: Մարդիկ կան, որ քառյակները ոտանավորի նման են կարդում, պարզ տեսնում ես, որ չի հասկանում ինչ բան է քառյակը»⁵:

Կարծում ենք, որ մեկ առանձին գիտություն, տվյալ դեպքում՝ գրականագիտությունը, անկարող է միայն իր զինանոցում գտնվող մեթոդներով համակողմանիորեն բացահայտել գրականության՝ առավել ևս քառյակների խորհուրդը, դրանից բխող գրողի ներաշխարհը, աշխարհընկալումը, աշխարհայացքը, մտորումներն ու շարժառիթները, էթե չի օգտվում հարակից գիտությունների զինանոցից: Այս դեպքում ընդլայնվում է ուսումնասիրության օբյեկտի իմացական-ճանաչողական ոլորտը: Մենք հատկապես նկատի ունենք փիլիսոփայության հասկացությունների ու կատեգորիաների ներմուծումն ու տրամաբանական ապարատի օգտագործումը, քանի որ գրականության ու փիլիսոփայության սերտաճումը թե՛ ստեղծագործական առումով, թե՛ վերլուծության տեսանկյունից լավ արդյունքների է հանգեցրել պատմականորեն: Այս առումով միանգամայն համամիտ ենք Ս. Սարինյանի այն պնդմանը, որ «Գիտական ճանաչողության ներկա փուլում գրականագիտության համար հրամայական խնդիր է դառնում սոցիոլոգիայի, մարդաբանության, հոգեբանության, փիլիսոփայության, պատմագիտության և մյուս գիտությունների հետազոտական փորձի յուրացումը»⁶:

Թումանյանի քառյակների ուսումնասիրությանը մենք մոտենում ենք հետևյալ մեթոդաբանական սկզբունքներով.

1. Իբրև ելակետ ընդգծում ենք դրանց խոհախմաստասիրական բնույթը, որոնց բնորոշ է խտացումը, բյուրեղացումը:

2. Չենք հետապնդում քառյակների առանձին-առանձին վերլուծություն և ոչ էլ նրանցից յուրաքանչյուրի ճիշտ ընկալման խնդիր ունենք:

3. Քառյակները դիտում ենք որպես մեկ միասնական, ամբողջական ստեղծագործություն և միասնության մեջ այն համարում ենք յուրահատուկ խոհափիլիսոփայական պոեմ: Այս դեպքում քառյակները դառնում են պոեմ կերտելու ինքնատիպ ձև, ինչպես Իսահակյանի «Ալազյազի մանիները»՝ կերտված բանաստեղծություններից:

⁴ **Նվարդ Թումանյան**, Գուշեր և գրույցներ, էջ 222:

⁵ **Նվարդ Թումանյան**, Գուշեր և գրույցներ, էջ 213:

⁶ **Ս. Սարինյան**, Հայոց գրականության երկու դարը /գիրք 2-րդ/, Երևան, 1989, էջ 374:

4. Քառյակների վերլուծությունը չենք կտրում, առանձնացնում Թումանյանի ողջ գրական ժառանգությունից, այլ դիտում ենք այդ համատեքստում և հատկապես նամակագրության և հրապարակախոսական նյութերում:

5. Պոեմի գլխավոր հերոսը կամ գործող անձը հենց Թումանյան պոետն ու մտածողն է, Թումանյան մարդը և քաղաքացին, որը խորհում է մարդու, նրա անցած ճանապարհի, մարդ-աշխարհի փոխհարաբերության, կյանքի, մահվան, կյանքի իմաստի մասին: Սա է քառյակների բովանդակությունը և ուղղվածությունը:

Թումանյանը իդեալ ուներ և քառյակների միջոցով այդ իդեալն էր իրականացնում: Այն մարդկային կյանքի կատարելությունն էր՝ վեհի, գեղեցիկի, բարուներդաշնակության զգացումով: Նա նկատել էր, որ խաթարված է հասարակությունը, խաթարված է մարդու հոգեկան աշխարհը, մարդու գործունեության և հասարակական առաջադիմության միջև խորը անդունդ է առաջացել և կասկածելի է թվում առաջադիմությունը: Կյանքի նկատմամբ փիլիսոփայական իդեալը այն լավացնելու, կատարյալին հասցնելու լավագույն ճանապարհի որոնումն է: Սա է Թումանյանի մտորումների առանցքը և այս տեսանկյունից համահունչ են «Դեպի մեծ կյանք» հոդվածի ներքոհիշյալ մտքերը. «Հիրավի, երբ խորափանց հայացքով նայում ենք դեպի ետ, անցած հեռավոր ժամանակների աղջամուղջուն ձեր աչքին մռայլ պատկերանում է մարդակեր մարդը, ապա երբ նորից դառնում ենք դեպի ձեր չորս կողմը, տեսնում ենք, որ մարդը էսօր ոչ թե մարդակեր չի, այլև մարդասպանությունն էլ նրա կյանքում արդեն համարվում է մի դժբախտ դեպք, որի վերացման համար մի մեծ մտահոգություն ունի...»⁷ քառյակի հանրահայտ տողերին.

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան

Հագար տարում հագիվ դարձավ Մարդասպան:

Թումանյանը նկատել է, որ մարդը կենդանական աշխարհում միակն է, որ իր առկա կեցությունը լրիվության, ամբողջության հասցնելու կարողություն ունի, այսինքն՝ կամ շրջապատի եղածը պիտի ստիպի ծառայեն իրեն, կամ էլ պետք է ստեղծի նորը: Ստեղծագործելու էությունը Թումանյանը ներկայացնում է հետևյալ կերպ. «Աստուծոց հետո միայն Բանաստեղծն է, որ ստեղծում է...: Եվ դրանց ստեղծագործության մեջ շատ մեծ նմանություն կա: Երկուսն էլ ստեղծում են ոչինչ բաներից մեծ բաներ, երկուսն էլ ստեղծում են իրենց պատկերի նման... Երկուսն էլ հայտնվում են իրենց ստեղծածի մեջ, թեև իրանց չեն տեսնում»⁸: Նա արարիչ բանաստեղծ էր, իր շրջապատում կերպար էր փնտրում ինչպես Գյոթեն. «...վերջին երկու հարյուրամյակների ընթացքում որքան երկչոտ ու անզոր է դարձել կյանքը: Այժմ որտե՞ղ կարող ենք բացահայտորեն ինքնատիպ բնավորություն հանդիպել: Ո՞վ ունի այնքան ուժ, որ լինի ճշմարտացի և հանդես գա որպես այդպիսին: Իսկ այդ բոլորը ազդում են բանաստեղծի վրա, մեր օրերում նա պետք է այդ բոլորն իր մեջ գտնի, որովհետև իր շրջապատում արդեն նման ոչինչ գտնել չի կարող»⁹: Ստեղծագործ ոգին՝ ընդդեմ կործանման ու չարության, ահա քառյակների հենքը: Քառյակների առանցքում մտահոգ ու տագնապող բանաս-

⁷ *Հովհ. Թումանյան*, ԵԼԺ, հ. 7, 1995, էջ 170:

⁸ *Հովհ. Թումանյան*, ԵԼԺ, հ. 7, 1995, էջ 410-411:

⁹ *Էքերման*, Ձրույցներ Գյոթեի հետ, Երևան, 1975, էջ 49:

տեղծն է.

**Ափսոս որ չես տեսնում բնավ
Տազնապն հոգուս խոր ու վեհ...
Հազար անգամ ափսոս ու ցավ,
Որ պիտ տեսնես երբևէ:**

Թումանյանին չի գոհացնում մարդ արարածի կեցվածքը բնության ու հասարակության հանդեպ, այնուամենայնիվ փորձում է միայն մարդուն դիտել որպես հավերժական բնության իմաստացած էակ, իսկ այդ էակը կոչված է վայելելու «էս աշխարհը շեն ու լի»: Նա անողոք է կյանքը վայել չիմացողների և այն խաթարողների նկատմամբ: Այստեղից էլ ծնվում է նրա դժգոհությունը, տազնապը, որում կա նաև խորը կարեկցանք մարդու հանդեպ.

**Չի հասկանում՝ ոնց վայելի,
Դըժգոհ է զուր ամեն մի մարդ:**

Մարդը զուրկ է գեղեցիկի ընկալումից, անտարբեր է բարու հանդեպ, ասել է՝ բարոյագուրկ է: Իսկ մարդու մեջ բուն դրած չարությունը հասել է մի անցանկալի վիճակի, որ անգամ բանաստեղծը տարակուսում է:

**Ու՞ր հեռանաս, կոխած տեղդ արյունոտ,
Ու՞մ մոտ զընաս, ծանոթդ, ընկերդ արյունոտ,
Ո՞նց մոռանաս էս աշխարհը /արյունոտ/:**

Թումանյանը ցանկանում էր վերափոխված տեսնել մարդուն: Նա նկատել էր, որ մարդը մյուս արարածներից տարբերվում է խելքով, բանականությամբ, դրա համար էլ նրա ամենամեծ թերությունը համարում էր անխելքությունը, անխելամտությունը: Այս գաղափարը արտահայտված է և՛ քառյակներում, և՛ արձակ գործերում, և՛ նամակներում ու հրապարակախոսական նյութերում: Թումանյանը չի ներում մարդուն այն բանի համար, որ ամեն բարիք իր ձեռքում ունենալով, դրանից պատշաճ օգտվել չի կարողանում:

Բանաստեղծի ստեղծագործական խառնվածքը և բնորոշ գծերը, որ արտահայտված են եղել բանաստեղծի տարբեր ստեղծագործություններում, բնական է՝ պետք է ի մի բերվեին քառյակներում: Սա բանաստեղծի ներաշխարհը տարբեր կողմերով և ավելի ամբողջական ձևով ներկայացնող մեկ ամփոփ ստեղծագործություն է, մանավանդ, որ քառյակներ ինտենսիվորեն սկսել է գրել կյանքի վերջին երեք տարիներին: Քառյակները արտաքին հայացքից պարզ ու դուրընդմենելի են թվում, մինչդեռ նրանց բովանդակության էության մեջ խորանալիս դրանք բարդ ու խորը մտորումներ են, նման իրենց հեղինակին, որին այսպես է բնորոշել Դ. Դեմիրճյանը. «Թումանյանը շատ բարդ մարդ էր: Նրան հասկանալը շատ դյուրին բան չէ: Շատերն են նրան բնորոշել և ընկել սխալների մեջ: Բնորոշել են արտաքինից, միակողմանի և դուրս բերել «հաճելի», «կենսուրախ», «բարի» կամ «դիվանագետ»... սխալ է այդ միակողմանիությունը: Թումանյանը բազմակողմանի գծերի մի կոմպլեքս էր...»¹⁰: Թումանյանը նկատել և իր անձի օրինակով ցույց է տվել, որ աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները ինչպես դրական, այնպես էլ բացասական առումներով փոխանցվում է մարդուն՝ մտահոգությունների, տազնապների, ապրումների, հոգսերի, հույզերի ձևով, որ մարդը ամենաարմատական չափերով փոխակերպումների ենթակա էակ է և սոցիալա-

¹⁰ Մեծերը անմահների մասին, Երևան, 1999, էջ 132:

կան կյանքի դրական ու բացասական փոփոխությունները իրենց համարժեք արձագանքն են գտնում նույնիսկ խստորեն ընդգծված անհատականությունների բարոյահոգեբանական վարքագծում: Այդպես է եղել բոլոր ժամանակներում: Ընդամենը մեկ փաստ. «Բայց մեր ժամանակն այնքան վատ է, որ բանաստեղծը շրջապատի մարդկային հասարակության մեջ ոչ մի տեղ օրինավոր բնավորության չի հանդիպում: Այդ խնդրին լուծում տալու համար Շիլլերը դիմում է երկու մեծ առարկաների՝ փիլիսոփայությանն ու պատմությանը. «...Բայց դուք նկատում եք, որ հենց այդ երկու հզոր գործող ուժերը՝ փիլիսոփայությունն ու պատմությունը, շատ տեղերում խանգարել են ստեղծագործությանը և վնասել նրա բանաստեղծական հաջողությանը»¹¹: Թումանյանը ևս դիմել է պատմությանն ու փիլիսոփայությանը, բայց դրանք նրա բանաստեղծական հաջողությանը չեն խանգարել, դեռ ավելին՝ տվել են խոհափիլիսոփայական երանգ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Էքերման*, Ջրույցներ Գյոթեի հետ, Երևան, 1975:
2. *Յովհ. Թումանյան*, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, Երևան, 1995, հ. 7:
3. *Նվարդ Թումանյան*, Յուզեր և զրույցներ, Երևան, 2009:
4. *Լևոն Հախվերդյան*, Թումանյանը և իր ժամանակը, Երևան, 2000:
5. *Ս. Սարինյան*, Հայոց գրականության երկու դարը /գիրք 2-րդ/, Երևան, 1989:

НЕКОТОРЫЕ ПОЗНАВАТЕЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ ПРИ ИЗУЧЕНИИ ТУМАНЯНОВСКИХ ЧЕТВЕРОСТИШИЙ

*Г. Г. Каджоян
О. А. Казарян*

В статье по новому подошли к анализу туманяновских четверостиший, расширив познавательную сферу изучаемого объекта. Привнесли ряд философских понятий и применили новые методические принципы. В частности, четверостишия рассмотрели как единое, целостностное произведение, и в единстве считаем его своеобразной философской поэмой, одновременно анализ четверостиший не отделяем от литературного наследия О.Туманяна.

При таком подходе в основе четверостиший озабоченный и встревоженный поэт, а внутри - творческий дух против зла и разрушения.

SOME COGNITIVE PECULIARITIES IN THE STUDIES OF TUMANIAN'S QUANTRIES

*H. G. Ghajoyan
O. A. Ghazaryan*

In our article a new approach has been drawn to the analysis of Tumanian's quantries enlarging the cognitive sphere in the object studies. We've included a number of philosophical conceptions and used new methodological principles. In particular we've considered the quantries as a joint, wholesome work and a specific philosophical poem. At the some time we don't separate, isolate the analysis of the quantries

¹¹ *Էքերման*, Ջրույցներ Գյոթեի հետ, էջ 282:

from Tumanian's whole literary inheritance. When having such an approach the anxious and alarmed poet is in the pivot and the creative soul against the evil and ruin in the base.

ԿԵՆՂԱՆԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒՄԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հայոց հնագույն հավատալիքների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հին հայերի և նրանց նախնիների հավատալիքներում բավականին շատ են տոտեմիզմի մասին վկայությունները: Հայ իրականության մեջ տոտեմիզմ տերմինի փոխարեն թերևս ճիշտ է օգտագործել **կենդանապաշտություն և բուսապաշտություն** տերմինները, որոնք պահպանված հիշատակություններում չեն հանդիպում տոտեմիզմի դասական օրինակով, սակայն առավել մոտ են այդ հավատալիքին և ներկայացնում են դրա ուշ շրջանի ձևափոխված տեսակներն ու վերապրուկները:

Հիմք ընդունելով այն, որ կյանքն ավելի բարձր սկզբունք է, քան Արևի կամ գետի (Ֆետիշի) բնությունը, Գ. Հեգելը գտնում է, որ կենդանապաշտությունն ավելին է տարրապաշտությունից: Փիլիսոփան դա բացատրում է նրանով, որ կենդանապաշտության շրջանակներում դրսևորվում է **սուբյեկտիվության ինքնուրույնությունը**, որին հասանելի է կենսականության իբրև **հոգևոր գոյի** գաղտնիքները. «Մարդու համար այդ գաղտնիքն էլ բովանդակում է հրաշալին, և նա կենդանու կենսականությունն ավելի բարձր է համարում, քան իրենը»¹: Վերլուծական առումով այդ մոտեցման տրամաբանական շարունակությունը կարելի է համարել Ն. Կապուստինի այն տեսակետը, որ ի տարբերություն Ֆետիշի՝ տոտեմիզմն առավելապես կարելի է համարել «ընդհանրացնող հավատալիք», և այդ տեսանկյունից Ֆետիշիզմը վերաբերում է տոտեմական պատկերացումների համակարգ²:

Հարկ է նշել, որ մեզանում կենդանապաշտության և բուսապաշտության վերաբերյալ պահպանված հիշատակությունները սակավ են և մեզ են հասել փոփոխված տեսքով: Չափազանց աղքատիկ են հատկապես **ավանդական տոտեմական պատկերացումների վերաբերյալ հիշատակությունները**: Սակայն ազգագրական, լեզվաբանական և պատմական տվյալները թույլ են տալիս փաստել, որ հին հայերի համար ևս գոյություն են ունեցել կենդանիների և բույսերի որոշ տեսակներ, որոնց արյունակցական-ազգակցական խորհրդապատկան կապ է վերագրվել:

Կենդանապաշտությունն ու բուսապաշտությունն անմիջականորեն առնչվել են նախնադարյան երկրագործության և անասնապահության հետ: Հայկական

¹ Гегель Г. В. Ф. Философия религии. Т. 1, с. 447.

² Капустин С. Н. Особенности эволюции религии, с. 108-109.